

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2020 թվականի դեկտեմբերի 28-ին կայացած Գիտական Խորհրդի N5 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 36 անդամներից 32-ը (ցուցակը կցվում է):

Օրակարգ

1. «Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման արդյունքները
/զեկ. փոխդեկան Ս.Քեյլյան/
2. «Զրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության» ամբիոնի վարիչի
հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ
/զեկ. ամբ.վարիչ Ս.Հայրոյան/
3. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների և գիտական ղեկավարների
հաստատում
/զեկ. ամբ.վարիչներ/
4. Ընթացիկ հարցեր

Օրակարգը հաստատելուց հետո

1. **ԼՍԵՑԻՆ.** Ս.Քեյլյանի հաղորդումը «Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման արդյունքների վերաբերյալ: Նա նշեց, որ ուսանողների մասանկցությունը բավականին ցածր է, առկա ուսուցման համակարգի ուսանողների մասանկցությունը կազմել է 11.58%, իսկ հեռակա ուսուցման ուսանողների մասանկցությունը՝ 3.5%: Ս.Քեյլյանը մանրամասնորեն ներկայացրեց նաև դեկանատի գործավարների, դեկանի և տեղակալների միջին գնահատականները: Հաղորդման մեջ նշվեց նաև, որ ի տարբերություն նախորդ տարիների, այս տարի ֆակուլտետի մեկ դասախոս է ստացել իրախուսական լրավճար ինչպես նաև մանրամասն ներկայացվեցին հարցման ժամանակ ուսանողների կողմից տրված կարծիքները: Խոսքի ավարտին Ս.Քեյլյանն ասաց, որ հարցման արդյունքները էլ.տարբերակով կուղարկվեն ամբիոններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց.Պ.Դավթյանը խնդրեց ներկայացնել գնահատականներն ըստ ամբիոնների: Դավթյանն իր խոսքում սոց.հարցման արդյունքում ձևավորած

գնահատականը համարեց սուբյեկտիվ, ինչը դասախոսին դարձնում է լիբերալ՝ հետազայում բարձր գնահատական հետևաբար և լրավճար ստանալու միտումով: Առաջարկեց սոց.հարցման արդյունքների հիման վրա հատկացվող լրավճարները դադարեցնել:

Պոգ.Ս.Սուվարյանը Նշեց, որ ներկայացված գնահատականների պատկերը նորմալ է ներկայիս պայմաններում: - Հարկավոր է հասկանալ թե ի՞նչ է պետք անել՝ արդյունավետությունը բարձրացնելու համար, - ասաց Ս.Սուվարյանը: Առաջարկեց ընդունել ի գիտություն և քննարկել ամբիոններում:

Պոգ.Ս.Մկրտչյանը - Գործընթացը կարևոր է դասախոսի համար դասընթացը բարելավելու առումով, սակայն առաջարկում եմ լրավճարների կարգից հանել սոց.հարցման գնահատականների հիման վրա խրախուսական լրավճար հատկացնելը, քանի որ դասախոսների միջև ստեղծվում են անհավասար պայմաններ՝ տարբեր մասնագիտություններում ուսանողների թվաքանակի տարբեր, իսկ երկրաբանություն մասնագիտության պարագայում ուսանողների թվաքանակի քիչ լինելու պատճառով, վերջին տարիներին նրանց թիվը 20-ից ավել չի լինում:

Պոգ.Ս.Գրիգորյանը նշեց, որ սոց.հարցումն իհարկե պետք է, բայց ոչ ներկայիս ընթացակարգով: -Զմոռանանք նաև, որ այն դեպքում, երբ բավականին թվով ուսանողներ կարծիք են հայտնում 1 դասախոսի վերաբերյալ, դա մտածելու տեղիք է տալիս: Համակարծիք եմ այն աշխատակիցների հետ, ովքեր առաջարկել են ուսանողի գնահատականի հիման վրա հատկացվող լրավճարը հանել, ինչպես նաև Մ.Մկրտչյանի այն մտքի հետ, որ երկրաբանների թիվը երբեք չի բավարարում լրավճարներ ստանալու նորմերի թվին: Անանուն հարցումը բարոյահոգեբանական տեսակետից լավ երևույթ չէ: Այն բերում է զրպարտանքի տարածմանը և վերջինս, որպես նորմալ երևույթ ընդունելուն: Հարցումը պետք է բաց լինի, մենք պետք է ուսանողների մեջ հավատ ներդնենք ազատ կարծիքի ձևավորման և արտահայտման հարցում, հատկապես, որ որևէ ուսանող չի հետապնդվել իր կարծիքի համար: Անանուն հարցումը վատ դաստիարակության հետևանքներ կունենա,-ասաց Ս.Գրիգորյանը:

Խոսեց ուսանողների դժգոհությունից առցանց ուսուցման վերաբերյալ և ասաց, որ իր կողմից կօգտագործվեն բոլոր հնարավորությունները՝ առկա ուսուցումը վերականգնելու համար:

- Հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների գալիք պաշտպանությունը անց է կացվելու առկա: Ոչ մի քննություն չի անցկացվի առցանց: Գործող ձևաչափը մեծ հարված է հասցնում կրթական համակարգին: Կովիդով վարակվածների թվի նվազումը հույս է տալիս, որ հունվարի քննությունները առկա կանցկացվեն,-ասաց Մ.Գրիգորյանը:

Դոց. Տ.Սարգսյանն առաջարկեց 2020/2021 ուս.տարվա 2-րդ կիսամյակի նույնիսկ առցանց ուսուցման պարագայում ընթացիկ քննությունները անցկացնել լսարանային պայմաններում:

ՈՐՈՇԵՑԻՆ. Քննարկելով «Դասախոսն ուսանողի աչքերով» սոց. հարցման դրական և բացասական կողմերն ընդունեցին դասախոսների լրավճարների հատկացումն ըստ սոցիալական արդյունքների՝ ոչ արդյունավետ:

2. ԼՄԵՑԻՆ. Ս.Հայրոյանի հաղորդումը Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ: Նշեց, որ ամբիոնի սպասարկում է նաև այլ ամբիոնների դասընթացները: Խոսեց արտադրական պրակտիկայի կազմակերպման գործընթացի վերաբերյալ և բարձր կուրսերի ներգրավվածության մասին: Խոսեց ամբիոնի համագործակցության վերաբերյալ այլ կազմակերպությունների հետ: Խոսեց ամբիոնում առկա խնդիրների մասին: (հաշվետվությունը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Մ.Գրիգորյանը դրական գնահատեց ամբիոնում կատարած աշխատանքը, սակայն ցավով նշեց, որ ամբիոնը չի բարձրաձայնում ամբիոնում կատարած գիտաարտադրական աշխատանքը: Պետք է աշխատանքներ տարվեն լաբորատորիան դարձնելու միջազգային ստանդարտներին համապատասխան: Առաջարկեց ամբիոնում մեկ տարվա կատարված աշխատանքը գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ամբիոնի կատարած աշխատանքը հաշվետու տարում գնահատել բավարար:

3. ԼՄԵՑԻՆ. Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ **Վ.Գրիգորյանի**, Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ **Ա.Գրիգորյանի**, Երկրաֆիզիկայի ամբիոնի վարիչ **Ս.Մկրտչյանի**, Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ **Ս.Հայրոյանի**, Սերվիսի ամբիոնի վարիչ **Ս.Սուվարյանի**, քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչ **Պ.Դավթյանին**, **ովքեր ներկայացրեցին** մագիստրոսական թեզի և ավարտական աշխատանքի թեմաները և ղեկավարներին: Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ **Շ.Խաչատրյանը** նշեց, որ առկա ուսուցման 4-րդ կուրսի 2 և հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ևս 2 ուսանող չեն ներկայացել թեմաները վերցնելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. **Մ.Գրիգորյանը** կարևորեց ավարտական աշխատանքներում ինքնուրույն տարրի առկայությունը: Հորդերեց ամբիոնի վարիչներին, որ անկախ համաճարակային պայմաններից, ղեկավարները և ուսանողները լուրջ մոտենան իրենց կողմից տարվող գիտական աշխատանքին: Հրահանգեց 1/ կազմել ղեկավարների և ուսանողների հանդիպման՝ խորհրդատվության ժամանակացույց, 2/ չներկայացած ուսանողների անուն ազգանունները ներկայացնել դեկանատ՝ չներկայանալու պատճառները պարզաբանելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել մագիստրոսական թեզի և ավարտական աշխատանքի թեմաները և գիտական ղեկավարները:

Խորհրդի վերջում Մ.Ա.Գրիգորյանը համբերություն մաղթեց բոլորին:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան